մը[1] ինքն խոնարհութեամբ կը պատմէ, թէ երբ «Բաղում տաժանելի աշխատութեամբ» աւարտեցի Յակոբայ թղթոյն մեկնութիւնը, յետոյ կը յաւելու, թէ «Ապա ի խղճէ մտացս հարեալ և յանարժանութենէ անձինս՝ կամեցայ դադարեցուցանել զընթացս բանիս. և սակաւ ինչ հանգիստ գտեալ, ի բռնազբօսեալոյ այլոց և ի հարկեցուցանող բանից՝ սկիզբն զարձեալ արարի»։ Թերեւս զինքը բռնադատողներէն զլխաւոր մին եղած լինի իւր ուսումնակից կաթողիկոսն Գրիգորիս Պահլաւունի, ինչպէս որ ըրած է իւր ուրիշ ժամանակակցաց[2]։

Սարգիս ի Քարաշիմու վանս հաստատուելէն ՈՐՉափ տարի վերջը սկսած է գրել իւր այս մեկնութիւնը, զայն որոշակի չյայտներ մեզ. միայն Յովհաննու Բ թղթոյն մեկնութեան մէջ — ըստ բերելոյ նիւթոյն — կ'ըսէ, թէ «Ահա այս հարիւր և յիսուն և վեց ամ է, յորմէ հետէ հաղար ամն (Քրիստոսի) լցաւ[3]. ուսկից կը հետեւի թէ 1156ին գրեթէ աւարտելու վրայ պէտք է լինի նա իւր այս երկասիրութիւնը։ — Տարակոյս չկայ, թէ բաւական տարիներ սպառած է նա իւր այս ընդարձակ գործն[4] ի գլուխ հանելու համար, և այս յայտնի է ոչ թէ միայն իւր վերոյիշեալ խօսքերէն, այլ և իւր յիշատակարանաց մէջ ստէպ ստէպ կրկնած խօսքերէն, թէ «Իմ աղաչանք են առ ձեզ, եղբարք սիրելիք Աստուծոյ և սիրեցեալք ի Քրիստոսէ, և արտասուօք պաղատանք, չառնել անտես զերկայն ժամանակաց աշխատութիւնս իմ յերկս վաստակոց իմոց», և այլն։

Արդ, այս մեկնութեանս բովանդակութիւնը կը կազմեն ընդ ամէնն 43 ընդարձակ ճառեր, յորոց 11ն ընծայեր է նա Յակոբայ թղթոյն, 18ը Պետրոսի կրկին թղթոց, 11ը Յովհաննու երբեակ թղթոց, և ի վերջոյ երբեակ ճառ ալ Յուդայի թղթոյն։ Այս ճառերս իւրաքանչիւրն իրենց հետ կից ունին նաեւ մի մի երկար յորդորակներ. եօթն թղթոց սկիզբն այլ առանձին առանձին նախերգանքներ կան. և հուսկ ապա գործոյս վերջն իբր չորս ընդարձակ թղթերէ բաղկացած ճառ մի այսու խորագրով. «Պատճառք եօթանեցունց թղթոցն կաթողիկեայց՝ չորից սրբոց առաքելոցն». զորս գրեթէ մի առ մի կը յիշատակէ[1] նաեւ Կիրակոս գանձակեցին։

Այս մեկնութիւնս ուշի ուշով ընթերցողն անշուշտ պիտի ըսէ, թէ Սարգիս արդի դարուս յառաջացեալ գիտութեամբ զարդացած մեկնիչ մ'ըլլայ։ Եւ յիրաւի, վասն զի ի հին հարս սակաւաթիւ են այնպիսի մեկնիչք, որ սուրբ Գրոց իւրաքանչիւր տողերը գրեթէ բառ առ բառ մեկնեն, այլ սովորաբար ըստ իմաստից միայն. նմանապէս նոքա ճարտարու-

1. Ի Յառաջ. մեկն. Յովհ. Ա թղթոյն, էջ 621։

2. Իգնատիոս վ. Դուկայ աւետարանին մեկնութիւնը, Սամուէլ Երէց իւր ժամանակագրութիւնը, նոյնպէս և սուրբ Ներսէս Շնորհալի իւր քանի մը գրուածները, նորա յանձնարարութեամբ գրած են։

3. Յորդորակ Բ, էջ 774։

4. Յետոյ Սարգիս տեսնելով, թէ այսպիսի ընդարձակ մեկնութիւն մի դժուարին է ամենուն կարդալ, ստիպուեցաւ տասը տարի վերջը՝ այսինքն է յամին 1166՝ համառօտել առաջինը, ինչպէս որ կը գրէ եւս, թէ ինքն եղած է «աշխատող զրոցս ի յերկս բանի մեկնութեան նախագունիցն, և ապա ի համառօտել զլիտանացուն՝ ընթերցող լուսամիտ համբակացդ և ուսումնասիրաց և քրիստոսասիրաց . . . . : Հայ թուականն յայնմ ամի յորժամ կատարեցի զզհամառօտս՝ յիշատակ ինձ և իմոցն և ի վարժուն մանկանց նորոյ առագաստի մօրս մերոյ վերին Երուսաղեմի՝ ծն էր ընդ վեց հարիւրի»։ — Յիշատակարանիս մէջ կը յիշեցնէ նաեւ իւր ծերութիւնը՝ այս համառօտութիւնը կատարելու պահուն, ահաւասիկ իւր խօսքերն. «Աղաչեմ սիրով Հոգւոյն և մաղթեմ թախանձելով, մի անտես առնել զերկայն ժամանակաց աշխատութիւնս իմ. . . և որք յիշէքդ աղաչելով վասն իմ ծերոյս Սարգսի՝ զՏէր, յիշեալ լիջիք և դուք յամենեցունց Արարչէն»։ Արդ, մեր վերը դրած Սարգսի ծննդեան թուականին համեմատ 71–6 տարեկան եղած կ'ըլլայ նա, որ է բաւական հասունացեալ հասակ մի, յորմէ ոչ շատ յետոյ թերեւս իւր մահկանացուն ալ կնքած ըլլայ։

1. Ի Պատմութեան, տպ. ի Վենետ. 1865. էջ 64։